և նորա հասեալ անդ թէպէտեւ բաժանեաց զդիրս նոցա, այլ ոչ ընկալաւ որոշ պատասխանիս և յամախէր ստէպ առ Կելկելեան Պօղոս, և Պատրիարքն այլ և այլ բանիւք հայեցուցանէր զնա 'ի գումարումն ազգային ժողովոյ։

Յառաջագոյն ըստ հրաւիրելոյ Իշխանաւորաց ազգին գնացեալ էին 'ի Կոստանդինուպօլիս Եղիա, Կիրակոս եւ Դիոնէսիոս Եպիսկոպոսունք, ուր էր և Զմիւռնացի Յարութիւն վարդապետն, եւ 'ի գումարիլ ազգային ժողովոյն ընտրեցին զեօթն Խորհրդականս Աթոռոյն եւ վասն դիւրութեան և բարւոք կառավարութեան Աթոռոյն, խմբագրեալ էր յառաջագոյն Պօղոս Պատրիարք կանոնական բանս գիտութեամբ ազգայնոց, և 'ի մատուցանել զայն յատեան, ամենեքեան հաճեալ ընդ իմաստս նորին և ձեռն արկեալ կնքեցին, զորոյ զպատճէնն ունիմք դնել 'ի ստորեւ։ Եւ ապա խորհրդով գրով և կանոնական բանիւք դարձուցին զԽորհրդականս յԵրուսաղէմ, ծանուցանել զմիտս նոցա միաբանաց վասն օգտի Աթոռոյն։ Եւ նոցա հասեալ յԻկոնիոն հիւանդացան ոմանք 'ի նոցանէ, եւ մնացին անդ մինչեւ գտին զառողջութիւնն։ Իսկ զՅարութիւն վարդապետ եւ զայլս առաքեցին ընդ կարաւանին 'ի Դամասկոս, սպասել նոցա անդ, զի 'ի միասին մտցեն յԵրուսաղէմ ըստ պատուիրելոյ Ամիրայից։ Եւ անտի ազդ արարին միաբանաց չխարիլ 'ի տիրողաց երկրին, և չվատնել յում պէտս զդրամս, սակս առնլոյ զգրեանս, զի չէին ինչ օգուտ, այլ սպասել գալստեան նոցին (Սեպտեմբեր 15)։ Եւ յետ այնորիկ չորեքին խորհրդականքս այսոքիկ մտին խաղաղութեամբ յԵրուսաղէմ, և որքան կարելի էր խոնարհութիւն ցուցեալ՝ ընկալեալ եղեն 'ի Պատրիարքէն և 'ի միաբանութենէ, որ և յետոյ բաղում ինչ գրեցին առ ազգապետս։ Եւ յետ ընթեռնլոյ 'ի ժողովի միաբանաց զդիրս ազգին եւ Պատրիարքին, մատուցին նաեւ զկանոնագիրն որ ունէր օրինակ զայս։

Որովհետեւ հոգելոյս նախնիք մեր իբրեւ յատուկ հոգեւոր պարտաւորութիւն իմն համարելով յԱստուծոյ ինքեանց տնօրինեալ և պատուիրեալ ջանային 'ի չինութիւն և 'ի պայծառութիւն քրիստոսական փրկագործ տեղեաց, և տիեզերական Աթոռոյն Երուսաղէմի և 'ի բարեկարգու-